

## 2021թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


Հիմնվելով վերջին տարիների արդյունքների և շահութաբերության մակարդակի վրա՝ հեռանկարային զարգացման համատեքստում Բանկի առաջիկա տարիների գործունեությունը միտված է այնպիսի համակարգային միջոցառումների և տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը, որոնք հիմնարար և կայուն հիմքեր ու նախադրյալներ կստեղծեն Բանկի նոր որակական զարգացման համար:

Բանկը հաշվետու ժամանակաըջանում շարունակել է հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցումը:

Անդրադառնալով հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ նշենք, որ 2021 թվականին Բանկին հաջողվեց արձանագրել ակտիվների և պարտավորությունների որոշակի աճ: Մասնավորապես,

- Բանկի ընդհանուր Ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են 45 մլրդ դրամով կամ 13.58%-ով և կազմել 378 մլրդ դրամ:

#### ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ




✓ Համախառն վարկային պորտֆելը կազմել է մոտ 240 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.387 մլրդ դրամով (0.6%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 64%-ը, որից,

- Անհատական վարկային պորտֆելը աճել է մոտ 14 մլրդ դրամով (12.7%-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը նվազել է 12.5 մլրդ դրամով (9.7%-ով)


2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2021Թ.ՎԵՐՁԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



• Տարեվերջին Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 41.9 մլրդ դրամով կամ 14.7%-ով և կազմել 326 մլրդ դրամ: Սա խոսում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ




## 2021թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


✓ Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հոդվածը ավելացել է 33.4 մլրդ դրամով (14.7%-ով) և կազմել ընդհանուր պարտավորությունների 80%-ը:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱճԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՄԼՆ ԴՐԱՄ



• Սեփական կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է 3.3 մլրդ դրամով կամ 6.8%-ով և կազմել 51.6 մլրդ դրամ:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



• 2021թ.-ին Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության

2021թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ


ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

դիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում եղել են ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ


- Տարվա զուտ շահույթը կազմել է 4.1 մլրդ դրամ: Այն նախորդ տարվա համեմատ աճել է 49%-ով:

ՉՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԴԻՆԱՍԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



- Գործառնական շահույթը կազմել է մոտ 8.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.3 մլրդ դրամով կամ 13.8%-ով:

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԴԻՆԱՍԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ




- Տոկոսային եկամուտները կազմել են 26.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 3.9%-ով:



2021թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Տոկոսային ծախսերը կազմել են 12.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.5%-ով:

ՏՈԿՈՍԱԿԻՆ ԵԿԱՄՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ




- Չուտ տոկոսային եկամուտները կազմել են մոտ 14.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 2.6%-ով:

- Ոչ տոկոսային եկամուտները կազմել են 4.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.7%-ով՝ պայմանավորված փոխարժեքային տարբերություններից առաջացած զուտ վնասով:

- Ոչ տոկոսային ծախսերը կազմել են մոտ 11.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 15.8%-ով:

ՈՉ ՏՈԿՈՍԱԿԻՆ ԵԿԱՄՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



- Չուտ մասհանումները կազմել են 2.8 մլրդ դրամ, նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել էր 6.1 մլրդ դրամ:
- Ծախս/Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 57.9%՝ նախորդ տարվա 50.6% ցուցանիշի դիմաց:

**Ռիսկերի կառավարումը**

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Սույն ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է “Ռիսկի կառավարում” թիվ 30 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:

Խորհրդի նախագահ՝

Արմեն Տեր-Տաճատյան

Խորհրդի անդամ՝

Արսեն Գամադեյան